Տաթև գիտակրթական համալիր

Հեռազատական աշխատանք

Թեման՝ Ոչ ստանդարտ դասերը տարրական դպրոցում. որոնում, լուծում, հայտնաբերում

Ուսուցիչ՝ Աննա Գրիգորյան

Դպրոց՝ Երևանի Ալ.Շիրվանզադեի անվան համար 21 հիմնական դպրոց

2023

Բովանդակություն

1. Ներածություն ……2
2. Կրտսեր դպրոցական երեխայի տարիքային, ֆիզիոլոգիկան առանձնահատկությունները ……..3
3. Ոչ ստանդարտ դասերը դասերը տարրական դպրոցում ……7
4. Ոչ ստանդարտ դասը՝ որպես աշակերտին դեպի հաջողության տանող ճանապարհ, որոնում,լուծում, հայտնաբերում……9
. Ոչ ստանդարտ դասի ակտուալությունը և կարևորությունը
. Սկզբունքները և ստեղծագործական մոտեցումը ոչ ստանդարտ դասերին
. Դասի նախապատրաստումն ու ընթացքը
. Ոչ ստանդարտ դասի պլանավորումը
. Ոչ ստանդարտ դասին ներկայցվող պահանջները
. Ստանդարտ և ոչ ստանդարտ դասերի տարբերությունները
5. Ոչ ստանդարտ դասերի անհրաժեշտությունը տարրական դպրոցում……13
6. Եզրակացություն…… 23
7. Գրականության ցանկ……25

Ներածություն

<<Եթե աշակերտը դպրոցում չի սովորում ինքնուրույն ստեղծագործել, ապա կյանքում նա միշտ կընդօրինակի ուրիշներին...>>
Լ.Տոլստոյ

Վեց տարեկան երեխաները երբ մտնում են դպրոց, նրանց աչուկները փայլում են: Նրանք դպրոցից ակնկալում են ինչ որ նոր բան՝ հետաքրքիր, յուրօրինակ: Երեխաները հավատով նայում են ուսուցչին, նրանք լի են ցանկությամբ ուսուցչի հետ բացահայտելու, սովորելու նորանոր բարձունքներ հաղթահարելու... Բայց ցավոք սրտի, արդեն տարեվերջին երեխաների մեծ մասը կորցնում է հետքրքրությունը ուսման նկատմամբ: Ավարտելով տարրական դպրոցը՝ հինգերորդ դասարանցին դեռ ունի մոտիվացիա, իսկ արդեն դպրոցն ավարտած պատանիների միայն 20-30%-ն է պահպանում հետաքրքրությունն ուսման նկատմամբ:

Ինչո՞վ բացատրել ուսման հանդեպ հետաքրքրության անկումը: Առաջին պատճառը ակընհայտ է՝ դպրոցի ծրագիրը բարդ է, խիտ, մեծ ծավալով: Աշակերտը չի հացնում յուրացնել ողջ ծավալը , հարմարվել պահանջներին, չի կարողանում տանել ուսման ծանր բեռը. նա ուղղակի դադարում է գործել, հաշտվում, այն մտքի հետ, որ ինքը անկարող է, միջակ: Երկրորդ պատճառը այն է, որ նույնիսկ այն երեխան, ով հասցնում է այս ամենը, պարզապես մոլորվում է ուսումնական ոչ ստանդարտ իրավիճակում՝ չկարողանալով լուծում տալ հանդիպած խնդիրին:

Այսօր դպրոցն ունի գերխնդիր՝ երեխային տալ ոչ միայն գիրտելիք, այլև կարողություններ և հմտություններ՝ սատացած գիտելիքը կյանքում օգտագործելու համար: Ի վերջո՝ «Գիտելիքը նպատակ չէ, այլ զենք՝ նպատակին հասնելու համար» Լև Տոլստոյ: Գիտելիք տալու համար պետք է նախ երեխայի համար հետաքրքիր դարձնել ուսումնական պրոցեսը, ներգրավվել նրան դրա մեջ, սովորեցնել սովորել, զարգացնել երևակայությունը, ստեղծագործական միտքը, բացահայտել նրա ներքին կարողությունները: Այստեղ ուսուցչին օգնության են գալիս ոչ տանդարտ դասերը:

Իսկ ի՞նչ է ոչ ստանդարտ դասը: Ոչ ստանդարտ դասը ուսումնական նյութի իմպրովիզ է: Այն աշակերտի հաջողության բանալին է: Նոր ստանդարտները պահանջում են ոչ ստանդարտ մոտեցումներ աշակերտների ուսուցմանը: Ոչ ստանդարտ դասը տոն է երեխայի համար, հնարավորություն յուրաքանչյուրին դրսևորելու իրեն, բարձրացնելու ինքնագնահատականը, դասի ակտիվ մասնակիցը դառնալու: Նման դասը ոչ միայն ուրախություն է, այլև խթան և ներշնչանքի աղբյուր: Այս դասերը շատ կարևոր են ուսուցման պրոցեսում: Ոչ ստանդարտ դասի նպատակը՝ ձանձրալի դասին կենդանության շունչ հաղորդելն է, ստեղծագործական մթնոլորտի ստեղծումը, առարկայի, դասի հանդեպ հետքարքրություն առաջացնելը: Իսկ հետաքրքրությունը այն առաջնային հիմքն է, որի վրա է հենված որջ ուսումնական գործունեությունը:

Կրտսեր դպրոցական երեխայի տարիքային, ֆիզիոլոգիկան առանձնահատկությունները

Առաջին դասարան գնալը սովորաբար լուրջ սթրես է յուրաքանչյուր երեխայի համար, չէ որ նրա կյանքն արմատապես փոխվում է. նախկինում նա կարող էր ամբողջ օրն անել այն ամենը, ինչ ուզում էր, իսկ այժմ ստիպված կլինի հարմարվել նոր ռեժիմին, արթնանալ միևնույն ժամին, դասերին լսել ուսուցիչներին՝ շատ ժամանակ տրամադրելով դասերին եւ անհամեմատ ավելի քիչ՝ խաղերին:

Վեց տարեկան առաջին դասարանցին իր հոգեկան զարգացման մակարդակով մնում է դեռ նախադպրոցական: Նա պահպանում է այդ տարիքին բնորոշ մտածողության առանձնահատկությունները, նրա մոտ գերակայում է ոչ կամային հիշողության, ուշադրության յուրահատկությունն այնպիսինն է, որ երեխան ընդունակ է արդյունավետ զբաղվել միևնույն գործով 10-15 րոպեից ոչ ավել:

Վեց տարեկան երեխայի անձի առանձնահատկությունները լրացուցիչ դժվարություններ են առաջացնում ուսման գործընթացում: Ուսման խնդիրներին համապատասխանող ճանաչողական դրդապատճառները դեռ անկայուն և իրավիճակային են, դրա համար էլ դասերի ժամանակ երեխաների մեծամասնության մոտ այն դրդապատճառները դրսևորվում և պահպանվում են ուսուցչի ջանքերի շնորհիվ: Բարձր ինքնագնահատականը շատ երեխաների մոտ հանգեցնում է նրան, որ նրանք դժվարանում են հասկանալ մանկավարժական գնահատման չափանիշները: Իրենց ուսումնական գործունեության գնահատականը նրանք համարում են ամբողջ անձի գնահատական: Բացասական գնահատականները, դիտողությունները նրանց մոտ առաջացնում են տագնապայնություն անհարմարության վիճակ, ինչի հետևանքով աշակերտներից շատերը դառնում են պասիվ: Երեխայի հուզական վիճակից կախված վարքի անկայունությունը դժվարացնում է ինչպես մանկավարժի հետ հարաբերությունները, այնպես էլ դասի ժամանակ երեխաների կոլեկտիվ աշխատանքը:

Վեց տարեկան երեխաներին ուսուցանելը դժվար է, ընդ որում այսպիսի ուսուցումը պետք է հաշվի առնի նրանց զարգացման առանձնահատկությունը:

Վեց տարեկան երեխաները իրենց ավելի հանգիստ, հարմարավետ, ինքնավստահ են զգում մանկապարտեզի նախապատրաստական խմբերում ուսուցանման ժամանակ՝ ի տարբերություն դպրոցի առաջին դասարանի: Գլխավոր պատճառն այն է, որ մանկապարտեզի կենսառիթմը, մեծահասակի և հասակակիցների հետ շփման ոճը, առավել համապատասխանում է երեխայի հոգեկան զարգացման մակարդակին: Իր սոցիալական անկայունության, նոր պայմաններին և հարաբերություններին հարմարման դժվարությունների պատճառով 6 տարեկան երեխան կարիք ունի անմիջական հուզական կոնտակտի, բայց դպրոցական ուսուցման ֆորմալիզացված պայմաններում այդ պահանջմունքը չի բավարարվում:

Իսկ ի՞նչ է տեղի ունենում երեխայի հետ, եթե նա, այնուամենայնիվ հայտնվում է դպրոցական ուսուցման ֆորմալիզացված համակարգի մեջ, որում բավարար չափով հաշվի չի առնվում նրա տարիքային առանձնահատկությունները: Ինչպես ցույց են տվել դպրոցում իրականացված կոմպլեքս հետազոտությունները, անբարենպաստ պայմաններում հաճախ վատանում է երեխաների առողջական վիճակը, կարող է քաշը պակասել, նվազել հեմոգլոբինի քանակն արյան մեջ, իջնում է տեսողության սրությունը, ի հայտ են գալիս գլխացավեր: Ընդհանուր ինքնազգացողության վատացման պատճառով՝ նվազում է երեխայի ոչ այդքան բարձր

աշխատունակությունը, ինչը բացասաբար է ազդում ուսման վրա։ Առանձին դեպքերում առաջանում են նյարդային խնդիրներ , դպրոցական դեզադապտացիա, նրանք լարված են և ֆիզիկապես, և հոգեպես։

Հարաբերականորեն բարենպաստ պայմաններում հոգեբանական լարվածությունն աստիճանաբար նվազում է 1,5-2 ամսից։ Առավել խիստ պայմաններում այն պահպանվում է՝ առաջացնելով երկրորդային էֆեկտներ ինչպես հոգեբանական, այնպես էլ սոմատիկ առումներով։

Հոգեբանական պատրաստվածությունը դպրոցին բարդ կազմավորում է, որը պահանջում է դրդապատճառային, ինտելեկտուալ, կամային ոլորտների զարգացման բարձր մակարդակ։

Մտածողություն

Կրտսեր դպրոցական տարիքում գերակայող ֆունկցիան մտածողությունն է։ Դրա շնորհիվ ինտենսիվորեն զարգանում, վերակառուցվում են հենց մտածական գործընթացները, իսկ մյուս կողմից, ինտելեկտից է կախված մնացած հոգեկան ֆունկցիաների զարգացումը։

Ավարտվում է նախադպրոցական տարիքից սկսած անցումը ակնառու-պատկերավոր մտածողությունից բառատրամաբանականին։ Երեխայի մոտ ի հայտ են գալիս ճիշտ դատողություններ. դատելով՝ նա օգտագործում է օպերացիաներ։ Սակայն սրանք դեռ ձևական-տրամաբանական օպերացիաներ չեն, հիպոթետիկ պլանում դատել կրտսեր դպրոցականը դեռ չի կարող։ Այս տարիքին բնորոշ օպերացիաները Ժան Պիաժեն անվանել է կոնկրետ, քանի որ կարող են կիրառվել միայն կոնկրետ, ակնառու նյութի հիման վրա։

Դպրոցական ուսուցումը կառուցվում է այնպես, որ բառատրամաբանական մտածողությունը նկատելիորեն զարգանում է։

Հոգեկան մնացած ֆունկցիաների զարգացումը կախված է մտածողության զարգացումից։

Ընկալում

Կրտսեր դպրոցական տարիքի սկզբում ընկալումը բավականաչափ տարբերակված չէ։ Դրա հետևանքով երեխան երբեմն շփոթում է գրությամբ մոտ տառերը և թվերը (օրինակ՝ 6 և 9)։ Չնայած նա կարող է նպատակաուղղված դիտարկել առարկաները և նկարները, նրա կողմից առանձնացվում են նաև առավել վառ հատկությունները, հիմնականում՝ գույնը, ձևը, մեծությունը։ Որպեսզի աշակերտը ավելի լավ վերլուծի օբյեկտների որակները, ուսուցիչը պետք է հատուկ աշխատանք տանի՝ նրանց սովորեցնելով դիտողականության։

Եթե նախադպրոցականի համար բնութագրական էր վերլուծական ընկալումը, ապա կրտսեր դպրոցական տարիքի վերջում, համապատասխան ուսուցման դեպքում, ի հայտ է գալիս սինթեզող ընկալումը։ Զարգացող ինտելեկտը հնարավորություն է տալիս՝ հաստատելու կապեր ընկալած տարրերի միջև։

Չնայած նրան, որ այս փուլում առվել մեծ նշանակություն ունի ակնառու-պատկերավոր մտածողությունը, երեխայի կողմից անմիջականորեն ընկալվողը արդեն նրան չի խանգարում դատել և կատարել ճշմարիտ եզրակացություններ։

Հիշողություն

Հիշողությունը զարգանում է երկու ուղղությամբ՝ կամածինության և իմաստավորվածության: Երեխաները ոչ կամային կերպով մտապահում են ուսումնական նյութը, որը նրանց մոտ հետաքրքրություն է առաջացնում, ներկայացվում է խաղով՝ կապված վառ, ակնառու պատկերների հետ, և այլն: Բայց, ի տարբերություն նախադպրոցականների՝ նրանք ունակ են նպատակաուղղված, կամային մտապահել իրենց անհետաքրքիր նյութը: Աստիճանաբար, ուսուցումը կառուցվում է կամածին հիշողության հիման վրա:

Կրտսեր դպրոցականները, ինչպես նախադպրոցականները, օժտված են լավ, մեխանիկական հիշողությամբ: Նրանցից շատերը ամբողջ տարրական դպրոցում ուսուցման ժամանակ մեխանիկորեն անգիր են անում ուսումնական տեքստերը, ինչը հանգեցնում է նշանակալից դժվարությունների միջին դասարաններում, երբ նյութը դառնում է բարդ և ծավալով մեծ: Նրանք հակված են բառացի վերարտադրելու այն, ինչը մտապահել են: Այս տարիքում իմաստային հիշողության կատարելագործումը հնարավորություն է տալիս յուրացնել մեծ քանակությամբ մնեմիկակակն հնարներ, այսինքն՝ մտապահման ռացիոնալ միջոցներ: Երբ երեխան իմաստավորում է ուսումնական նյութը, հասկանում է այն, նա միաժամանակ նաև մտապահում է այն: Այս կերպ, ինտելեկտուալ աշխատանքը միևնույն ժամանակ մնեմիկական գործունեություն է. մտածողությունը և իմաստային հիշողությունը դառնում են անքակտելիորեն կապված: Պետք է նշել, որ կրտսեր դպրոցականը կարող է հաջողությամբ մտապահել և վերարտադրել և իրեն անհասկանալի տեքստ: Դրա համար էլ մեծահասկաները պետք է վերահսկեն ոչ միայն արդյունքը, այլև հենց սովորելու գործընթացը՝ ինչ միջոցներով է աշակերտը մտապահել նյութը:

Տարրական դասարաններում ուսուցչի խնդիրներից մեկը երեխաներին որոշակի մնեմիկական հնարներ սովորեցնելն է: Դա առաջին հերթին՝ տեքստի բաժանումն է իմաստային մասերի: Արդյունքում՝ ուսումնական նյութը հասկացվում է, կապվում հնի հետ և ներառվում երեխայի գիտելիքների ընդհանուր համակարգի մեջ: Այպիսի իմաստավորված նյութը հեշտ է վերարտադրվում:

Ուշադրություն

Կրտսեր դպրոցական տարիքում զարգանում է ուշադրությունը: Առանց այս ֆունկցիայի բավարար ձևավորվածության՝ ուսումնական գործունեությունն անհնարին է: Դասի ժամանակ ուսուցիչը աշակերտների ուշադրությունը հրավիրում է ուսումնական նյութի վրա, այն պահում երկար ժամանակ, տեղափոխում աշխատանքի մի տեսակից մյուսին: Ի տարբերություն նախադպրոցականների՝ կրտսեր դպրոցականները առավել ուշադիր են: Նրանք արդեն ընդունակ են ուշադրությունը կենտրոնացնել անհետաքրքիր գործողությունների վրա, բայց նրանց մոտ դեռ տիրապետող է ոչ կամածին ուշադրությունը: Նրանց համար արտաքին տպավորություններն ուժեղ շեղող գործոն են, նրանց դժվար է կենտրոնանալ իրենց համար անհասկանալի, դժվար նյութի վրա: Նրանց ուշադրությունը տարբերվում է ոչ մեծ ծավալով, թույլ կայունությամբ. նրանք կարող են կենտրոնացած մի գործով զբաղվել 10-20 րոպե: Դժվար է ուշադրության բաշխումը և նրա տեղափոխումը մի առաջադրանքից մյուսին:

Ուսումնական գործունեության ընթացքում զարգանում է երեխայի կամածին ուշադրությունը: Սկզբնական շրջանում հետևելով ուսուցչի ցուցումներին, աշխատելով նրա վերահսկողությամբ՝ նա անընդհատ ձեռք է բերում առաջադրանքներն ինքնուրույն կատարելու կարողություն, ինքն է նպատակ դնում և կատարում իր գործողությունները: Իր

ուսումնական գործունեության նկատմամբ հսկողությունը հենց աշակերտի կամային ուշադրությունն է:

Տարբեր երեխաներ ուշադիր են տարբեր չափով. քանի որ ուշադրությունը օժտված է տարբեր հատկություններով, այդ հատկությունները զարգանում են տարբեր չափով՝ առաջացնելով անհատական տարբերակներ: Որոշ աշակերտներ ունեն կայուն, բայց վատ տեղափոխվող ուշադրություն, նրանք բավական երկար և ջանաբար կատարում են մի առաջադրանք, բայց արագ անցնել մյուս առաջադրանքին՝ նրանց համար դժվար է: Ուրիշները հեշտ տեղափոխում են իրենց ուշադրությունը ուսումնական գործընթացի ընթացքում, բայց հեշտ էլ շեղվում են կողմնակի ազդակներից: Երրորդների մոտ լավ կազմակերպված ուշադրությունը համադրվում է նրա քիչ ծավալի հետ:

Հանդիպում են նաև անուշադիր աշակերտներ, ովքեր իրենց ուշադրությունը կենտրոնացնում են ոչ թե դասերի, այլ ուրիշ բաների վրա: Եթե այսպիսի երեխան նայում է գրքին, նա չի տեսնում առաջադրանքները, կանոնները, այլ նպատակաուղղված ուսումնասիրում է տեքստը կամ նկարը, որը կապ չունի տվյալ դասի հետ: Այսպիսի երեխաների ուշադրությունը բավական զարգացած է, բայց անհրաժեշտ ուղղվածության բացակայության պատճառով, նրանք ցրված աշակերտի տպավորություն են թողնում: Անուշադիր կրտսեր դպրոցականների մեծամասնությանը բնորոշ է վատ կենտրոնացվածությունը, անկայուն ուշադրությունը:

Ոչ ստանդարտ դասերը դասերը տարրական դպրոցում

Վեց տարեկան երեխաները մտնելով դպրոց, ակնկալում են ինչ որ նոր բան՝ հետաքրքիր, յուրօրինակ: Երեխաները հավատով նայում են ուսուցչին, նրանք լի են ցանկությամբ ուսուցչի հետ բացահայտելու, սովորելու նորանոր բարձունքներ հաղթահարելու… Բայց ցավոք սրտի, արդեն տարեվերջին երեխաների մեծ մասը կորցնում է հետքրքրությունը ուսման նկատմամբ: Ավարտելով տարրական դպրոցը՝ հինգերորդ դասարանցին դեռ ունի մոտիվացիա, իսկ արդեն դպրոցն ավարտած պատանիների միայն 20-40%-ն է պահպանում հետաքրքրությունն ուսման նկատմամբ:

Ինչո՞վ բացատրել ուսման հանդեպ հետաքրքրության անկումը: Առաջին պատճառը ակընհայտ է՝ դպրոցի ծրագիրը բարդ է, խիտ, մեծ ծավալով: Աշակերտը չի հացնում յուրացնել ողջ ծավալը , հարմարվել պահանջներին, չի կարողանում տանել ուսման ծանր բեռը. նա ուղղակի դադրում է գործել, հաշտվում, այն մտքի հետ, որ ինքը անկարող է, միջակ: Երկրորդ պատճառը այն է, որ նույնիսկ այն երեխան, ով հասցնում է այս ամենը, պարզապես մոլորվում է ուսումնական ոչ ստանդարտ իրավիճակում՝ չկարողանալով լուծում տալ հանդիպած խնդիրին:

Այսօր դպրոցն ունի գերխնդիր՝ երեխային տալ ոչ միայն գիրտելիք, այլև կարողություններ և հմտություններ՝ սատացած գիտելիքը կյանքում օգտագործելու համար: Ի վերջո՝ «Գիտելիքը նպատակ չէ, այլ զենք՝ նպատակին հասնելու համար» Լև Տոլստոյ: Գիտելիք տալու համար պետք է նախ երեխայի համար հետաքրքիր դարձնել ուսումնական պրոցեսը, ներգրավվել նրան դրա մեջ, սովորեցնել սովորել, զարգացնել երևակայությունը, ստեղծագործական միտքը, բացահայտել նրա ներքին կարողությունները: Այստեղ ուսուցչին օգնության են գալիս ոչ տանդարտ դասերը:

Իսկ ի՞նչ է ոչ ստանդարտ դասը: Դժվար է տալ կոնկրետ սահմանում, բայց հստակ կարելի է տարբերել ստանդարտ դասից: Ոչ ստանդարտ դասը ուսումնական նյութի իմպրովիզ է: Այն աշակերտի հաջողության բանալին է: Նոր ստանդարտները պահանջում են ոչ ստանդարտ մոտեցումներ աշակերտների ուսուցմանը: Ստանդարտ դասը կանխատեսելի է աշակերտի համար և նա զարմանք է ապրում, երբ ուսուցիչը հանկարծ դասը կապում է ուրիշ առարկաների հետ և հաղորդում տեղեկությունը ոչ ստանդարտ ձևով: Ոչ ստանդարտ դասը տոն է երեխայի համար, հնարավորություն յուրաքանչյուրին դրսևորելու իրեն, բարձրացնելու ինքնագնահատականը, դասի ակտիվ մասնակիցը դառնալու: Նման դասը ոչ միայն ուրախություն է, այլև խթան և ներշնչանքի աղբյուր: Նման դասերը շատ կարևոր են ուսուցման պրոցեսում: Ոչ ստանդարտ դասի նպատակը՝ ձանձրալի դասին կենդանության շունչ հաղորդելն է, ստեղծագործական մթնոլորտի ստեղծումը, առարկայի, դասի հանդեպ հետքարքրության առաջացնելը: Իսկ հետաքրքրությունը այն առաջնային հիմքն է, որի վրա է հենված ողջ ուսումնական գործունեությունը:

Սակայն պնդել, որ ստանդարտ դասերը կարևոր չեն, սխալ է ոչ ստանդարտ դասերը չի կարելի անցկացնել ամեն օր, այն կկորցնի իր ֆունկցիան։ Ուսուցիչը պետք է տիրապետի այս երկու տեսակներին միաժամանակ։

Յուրաքանչյուր ուսուցչի առջև դրված է նպատակ՝ տալ երեխային խոր գիտելիք, զարգացնել հմտություններն ու կարողությունները, ցույց տալ երեխայի ներքին ռեսուրսները, առաջացնել հետաքրքրասիրություն առարկայի, ուսման նկատմամբ, նորը բացահայտելու ցանկություն, սովորեցնել մտածել , ստուգել իմացածը։ Ոչ ստանդարտ դասը հնարավորություն է տալիս ստեղծել նպատավոր պայման երեխայի ակտիվ մտածողության համար։ Դաստիարակության պրոցեսում նույնպես տեղի է ունենում դասի ժամանակ։ Ժամանակակից դասը այն դասն է, որի ժամանակ ուսուցիչը բացահայտում և օգտագործում է աշակերտի բոլոր հնարավորությունները, հող ստեղծում նրա մտածողության զարգացման և անձի ձևավորման համար։ Ոչ ստանդարտ դասերը օգնում են աշակերտին զարգացնել հիշողությունը, մտածողութունը, երևակայությունը, ինքնուրույնությունը, դասանյութը դարձնում են կենդանի, հետաքրքիր։ Երեխան որոնում է նոր լուծումներ, որոնում ,գտնում , հայտանբերում։ Իհարկե, խաղային հանձնարարությունները պետք է համընկնեն դասանյութի հետ և նման դասեր անցկացնելիս պետք է հաշվի առնել երեխայի տարիքային առանձնահատկությունները։

1. Ոչ ստանդարտ դասը՝ որպես աշակերտին դեպի հաջողության տանող ճանապարհ.որոնում, լուծում,հայտնաբերում

1.1 Ոչ ստանդարտ դասի ակտուալությունը և կարևորությունը:

Նոր ստանդարտները պահանջում են ոչ ստանդարտ մոտեցումներ աշակերտների ուսուցմանը: Դպրոցում այս դասերը իրենց ուրույն տեղն ունեն, դրանք ապահովում են յուրաքանչյուր աշակերտի մասնակցությունը, ընդգծում նրանց անհատականությունը, բարձրացնում ինքնագնահատականը և պատասխանատվության զգացումը: Ոչ ստանդարտ մոտեցումը հնարավորություն է տալիս երեխային դրսևորելու իր գիտելիքներն ու հմտությունները: Այն յուրաքանչյուր երեխայի տալիս է դրսևորման հավասար պայմաններ : Երեխայի մոտ առաջանում է կենդանի հետաքրքրություն դեպի առարկան, այն հզոր խթան է հանդիսանում ուսման հոտագա ընթացքի համար: Այս դասերի շնորհիվ երեխան դառնում է պասիվ աշակերտից ակտիվ, գործող, երևակայող անձնավորություն իսկ դասարանը դառնում է ստեղծագործող միահամուռ կոլեկտիվ, որտեղ արդյունքը կախված է յուրաքանչյուրից:

Դասի այս տեսակը իր մեջ ներառում է տարբեր ձևեր և մեթոդներ, պրոբլեմային իրավիճակներ, որոնողական գործունեություն, ինտեգրված դասեր, որը ապահովում է միջառարկայական կապը և այլ: Այն հանում է երեխայի լարվածությունը, կենդանացնում մտածողությունը, կենտրոնացնում ուշադրությունը, զարգացնում երևակայությունը և բարձրացնում հետաքրքրությունը, որն էլ տանում է դեպի որակյալ կրթություն:

Ոչ ստանդարտ դասը.

- Կրում է դաստիարակչական և ուսուցողական բնույթ
- Հնարավորություն է տալիս ստացած գիտելիքը կիրառել կյանքում և պրակտիկայում
- Հասանելի է աշակերտին
- Նպաստում է աշակերտի ինքնուրույնության ձևավորմանը
- Զարգացնում է երեխայի հմտություններն ու կարողությունները
- Առաջացնում է մոտիվացիա և հետաքրքրություն առարկայի նկատմամբ
- Ապահովում է անհատական մոտեցում յուրաքանչյուր երեխային:



1.2 Սկզբունքները և ստեղծագործական մոտեցումը ոչ ստանդարտ դասերին:

Ոչ ստանդարտ դասերը վարելիս պետք է առաջնորդվել մի քանի սկզբունքներով.

1. Հրաժարում ավանդական մոտեցուներից և դասերի միապաղաղ անցկացումից:
2. Աշակերտների մաքսիմալ ներգրավածությունը դասին:
3. Ոչ թե ժամանցային, այլ ուսուցողական բնույթ՝ ստեղծագործական մոտեցմամբ:
4. Ալտերնատիվ մոտեցումների և տարբեր տեսակետների աջակցում:
5. Խաղորդակցումն ու համագործակցությունը ընդունել որպես դասապրոցեսի բաղկացուցիչ և անբաժան մաս:
6. Հաշվի առնել երեխայի տարիքային, ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, հետաքրքրությունները, կարողությունները և հակվածությունները:
7. Գնահատումը ոչ միայն վերջնական արդյունքի, այլև աշխատանքի ընթացքի համար:

1.3 Դասի նախապատրաստումն ու ընթացքը:

Նախապատրաստումը ընթանում է երկու փուլով՝

1. Նախապատրաստում.

   Այս փուլում ակտիվ գործունեություն է ծավալում ոչ միայն ուսուցիչը, այլ նաև աշակերտները: Եթե ստանդարտ, ավանդական դասերին, նման ակտիվություն ցուցաբերում է հիմնականում ուսուցիչը, ապա ոչ ստանդարտ դասերին մեծ մասամբ ակտիվ գործունեություն ծավալում են աշակերտները: Նրանք բաժանվում են խմբերի կամ զույգերի, ստանում են հանձնարարություններ, որոնք պետք է կատարել դասի ընթացքում՝ կազմեն դասի պլան, կամ սկանվորդ, վիկտորինա, դերային խաղ և այլն:

2. Ընթացք.

   Նախապատրաստման փուլում դրվում է խնդիր կամ առաջադրանք, որը և կատարվում է դասի ընթացքում: Դասի ընթացքում երեխան հնարավորություն է ստանում ոչ միայն էմոցիոնալ շփում ունենալ ուսուցչի հետ , այլ նաև շփում ընկերների հետ, խմբում աշխատելու հմտություն է ձեռք բերում: Զարգանում է երեխայի երևակայությունը, ստեղծագործական միտքը, մտածողությունը: Այն բարերան ազդեցություն է թողնում նյարդային համակարգի վրա, անցնում է լարվածությունը, զարգանում է երեխայի էմոցիոնալ դաշտը: Այն դասը դարձնում է կենդանի, հետաքրքիր, օգտակար: Առաջանում է սովորելու, նորն իմանալու, բացահայտելու մոտիվացիա: Հետաքրքրություն է առաջացնում առարկայի հանդեպ, պահվում է միջառարկայական կապը:



1.4 Ոչ ստանդարտ դասի պլանավորումը:

Պլանը՝ գործիք է ուսուցչի համար: Այդ պատճառով դասի պլանավորումանը պետք է մոտենալ բավականին լուրջ: Ուսուցիչը նախապես ընտրում է թեման, մեթոդներն ու հնարքները, աշակերտների գործունեությունը և միջառարկայական կապը պահպանելով, կազմում դասի պլանը:

1.5 Ոչ ստանդարտ դասին ներկայցվող պահանջները

Ոչ ստանդարտ դաս վարելիս՝ պետք է հաշվի առնել ուսումնական ծրագիրը, չափորոշիչները, աշակերտների պատրաստվածության աստիճանը, աշակերտների տարիքային, անհատական, ֆիզիոլոգիական առանձնահատկությունները: Ոչ ստանդարտ դաս վարելը նպաստում է աշակերտների ստեղծագործական մտքի զարգացմանը, այն պետք է ծառայի այդ նպատակին: Ուսուցչի ստեղծագործական մոտեցումից է կախված երեխաների տարվածությունը այդ դասով: Ուսուցիչը հանդես է գալի որպես ակտիվ ստեղծագործող, ստեղծող և ոչ թե հասարակ պլանով աշխատող մասնագետ:

1.6 Ստանդարտ և ոչ ստանդարտ դասերի տարբերությունները

Ստանդարտ դաս	Ոչ տանդարտ դաս
Նպատակը՝ **1. Ուսուցչի համար-** տալ ուսուցանվող նոր նյութը **2. Աշակերտի համար**- յուրացնել նոր նյութը	Նպատակը՝ **1. Ուսուցչի համար-** կազմակերպել աշակերտների աղյունավետ գործունեությունը **2.Աշակերտի համար**- դասին աշխատել ստեղ-ծագործաբար
Գործունեությունը՝ **1. Ուսուցչի համար-** բացատրել ուսուցանվող նոր նյութը, կրկնել անցած թեմաները **2. Աշակերտի համար**- լսել նոր նյութը, հիշել, յուրացնել նոր նյութը	**Գործունեությունը՝** **1. Ուսուցչի համար-** կազմակերպել երեխաների ստեղծագործական աշխատանքը **2.Աշակերտի համար**- ուսումնասիրել, բացահայ-տել, անալիզի ենթարկել, քննարկել
Կառուցվածքը՝ Խիստ ՝ ըստ պլանի, առանց շեղումների	**Կառուցվածքը՝** Ազատ, պլանավորածից կարող է շեղվել
Դասի մոտեցումը՝ Խնդրի լուծումը դիտարկվում է մի տեսանկյունից՝ ըստ դասագրքի տված լուծման	**Դասի մոտեցումը՝** Խնդրի լուծումը դիտարկվում է տարբեր տեսանկյուններից, ուսումնասիրվում՝ պահելով միջառարկայական կապը:

2. Ոչ ստանդարտ դասերի անհրաժեշտությունը տարրական դպրոցում

Ոչ ստանդարտ դասերը տարրական դպրոցում ունեն կարևոր դեր և նշանակություն: Դրանք կրտսեր դպրոցականի մոտ առաջացնում են հետաքրքրություն ուսման նկատմամբ, հանում են հոգնածությունը, օգնում են յուրացնել ուսումնական նյութը, ունենում են դրական ազդեցություն նյարդային համակարգի և էմոցիոնալ դաշտի վրա: Դասի այս տեսակի շնորհիվ երեխան ձեռք է բերում ավելի խորը գիտելիքներ: Ոչ ստանդարտ դասը տարրական դպրոցում միշտ հետաքրքիր է, ակտիվ գործունեություն են ցուցաբերում բոլորը, անգամ պասիվ աշակերտները, յուրաքանչյուր աշակերտ ստանում է հնարավորություն իրեն դրսևորելու, իսկ դասարանը դառնում է ստեղծագործող խմբված կոլեկտիվ: Այս դասերը հանում են ցանկացած լարվածություն, երեխան դառնում է ազատ, հանգիստ, դրա շնորհիվ ակտիվանում է երեխայի մտածողությունը, երևակայությունը, երեխան սկսում է սիրով հաճախել դպրոց:

Դասը, որը պարբերաբար կրկնվում է, իր կառուցվածքով պահանջում մտածողության միևնույն ֆունկցիաների կատարումը, պարզապես դառնում է ձանձրալի, թողնում է բացասական ազդեցություն երեխայի ներաշխարհի վրա, իջնում է ուսման որակը, աստիճանաբար կորում սովորելու ցանկությունը:

Ոչ ստանդարտ դասը նաև ազդում է անձի ձևավորման վրա, բարձրացնում երեխայի ինքնագնահատականը: Աշակերտը միշտ պետք է տեսնի աշխատանքի ստեղծագործաբար մոտեցումը, այդ ժամանակ ինքը նույնպես կփորձի ամեն ինչին մոտենալ ստեղծագործաբար: Երեխայի մոտ արթնանում է բացահայտելու , գտնելու, նորը իմանալու պահանջմունք, որն էլ հաջող ուսուցման հիմքն է, Երեխան ցանկանում է սովորել ոչ թե ուսուցչի, այլ իր համար, որովհետև հետաքրքիր է բացահայտել, փնտրել, գտնել և ինքնուրույն ենթադրություններ անել: Ուսուցչին մնում է սովորեցնել սովորել, ստեղծագործել, երևակայել, հավատալ ուժերին, երազել… Տարրական դպրոցում, ելնելով երեխաների ֆիզիոլոգիական առանձնահատ-կություններից, շատ կիրառելի են ոչ ավանդական դասերը, խաղերը, բեմականացումները, քիմիական փորձերը:

Ոչ ստանդարտ դասի ձևը ընտրելիս, ուսուցիչը պետք է հաշվի առնի սեփական բնավորության գծերը, իր պատրաստվածության աստիճանը և դասարանի առանձ-նահատկությունները և յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկութ-յունները: Ամեն ուսուցիչ իր աշխատանքում պետք է օգտագործի այն, ինչ գտնում է հնարավոր և ճիշտ՝ կարող է օգտագործել դասն ամբողջությամբ կամ վերցնել դասի մի մասը, կարող է այն համեմել համակարգչային հնարքներով, պրեզենտացիաներով և այլն, որովհետև ցանկացած ուսուցիչ ստեղծագործական մտքով անձնավորություն է և ազատ իր ընտրության մեջ:



Տարրական դպրոցում իրականացվող ոչ ստանդարտ դասերը կատարում են մի քանի ֆունկցիաներ.

- Զարգացնում և երկարատև պահպանում են կրտսեր դպրոցականի հետաքրքրությունը ուսման հանդեպ,

- Օգնում են բացահայտել երեխաների ներքին հնարավորություններն ու տարվածությունները,

- Հնարավորություն են տալիս խմբային և զույգերով աշխատանքի, ամրապնդում փոխհարաբերությունները,

- Զարգացնում են ստեղծագործական միտքն ու երևակայությունը,

- Օգնում են յուրացնել ուսումնական նյութը,

- Ծանրաբեռնվածությունը թոթափելու հնարավորություն են ստեղծում,

- Լավագույնս ձևավորում են երեխայի մեջ անձնային որակները, երեխան ձևավորվում է որպես անհատականություն,

- Ստեղծում են ջերմ ընկերական մթնոլորտ դասարանում, լավացնում են հարաբերությունները աշակերտների ուսուցչի միջև:

Ամենատարածված դասի ձևերից են դաս-հեքիաթը, դաս-մրցույթը, դաս-խմբային աշխատանքները,դաս-հետազոտությունը, դաս-փորձերը, դաս-խաղը, ինտեգրված դասերը, դաս-էքսկուրսիաները, համակարգչային դասերը և այլն: Ստորև ներկայացնում եմ իմ սեփական փորձով արված ևս մի քանի ոչ ստանդարտ դասերից;

Զախախոր
Դեմիրճյան
Գարեգին
Նժդեհ

150

Մի քանի ուսուցողական էքսկուրսիաներ Հայաստանի մարզերում և Արցախում

Եզրակացություն

Ոչ ստանդարտ դասերը տարրական դպրոցում ունեն կարևոր դեր և նշանակություն։ Դրանք կրտսեր դպրոցականի մոտ առաջացնում են հետաքրքրություն ուսման նկատմամբ, հանում են հոգնածությունը, օգնում են յուրացնել ուսումնական նյութը, ունենում են դրական ազդեցություն նյարդային համակարգի և էմոցիոնալ դաշտի վրա։ Դասի այս տեսակի շնորհիվ երեխան ձեռք է բերում ավելի խորը գիտելիքներ։ Ոչ ստանդարտ դասը տարրական դպրոցում միշտ հետաքրքիր է, ակտիվ գործունեություն են ցուցաբերում բոլորը, անգամ պասիվ աշակերտները, յուրաքանչյուր աշակերտ ստանում է հնարավորություն իրեն դրսևորելու, իսկ դասարանը դառնում է ստեղծագործող խմբված կոլեկտիվ։ Այս դասերը հանում են ցանկացած լարվածություն, երեխան դառնում է ազատ, հանգիստ, դրա շնորհիվ ակտիվանում է երեխայի մտածողությունը, երևակայությունը, երեխան սկսում է սիրով հաճախել դպրոց։

Գրականության ցանկ

1. Ինտերնետային կայք՝ https://hy.wikipedia.org/wiki/%D4%BF%D6%80%D5%BF%D5%BD%D5%A5%D6%80_%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%BF%D5%A1%D6%80%D5%AB%D6%84
2. Լ.Ս. Վիգոտսկի <<Յոթ տարեկանի ճգնաժամ>>
3. Содержание и методы современного урока: учеб. пособие. – Волгоград: ВА МВД России, 2009.
4. Чадова Н. А. Игры в обучении младших школьников// ж. «Управление начальной школой», № 2, 2009
5. Дэйв Берджес «Обучение как приключение» Москва 2023